«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ամսաթիվ՝	14.08.2023թ.
Ֆուտբոլային ակումբ՝	«Վեստ արմենիա ՖԱ» ՀԿ
Անձ	«Վեստ Արմենիա» առաջին թիմի մարզիչ Կարեն Ավոյան (1455)
Առաջնություն՝	IDBank ՊԼ 2023-2024
Խաղ՝	«Վեստ Արմենիա» - «Ալաշկերտ» (1:4), 07.08.2023թ.
Վարույթ՝	ՊԼ-008

Հարգելի՛ գործընկեր,

Կից ներկայացված է ՊԼ-008 վարույթի շուրջ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից 2023 թվականի օգոստոսի 10-ին տեղի ունեցած նիստի արդյունքում կայացված որոշումը:

Խնդրում ենք որոշումն ընդունել ի գիտություն և ապահովել վերջինիս կատարումը՝ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով (2023թ. խմբագրություն) սահմանված կարգով:

Հարգանքով՝

ՀՖՖ Կարգապահական գրասենյակ

Համակարգող՝ Գայանե Զաքարյան

Հասցեատեր՝

«Վեստ Արմենիա ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ fcwestarmenia@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10.08.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Փոխնախագահ	Ռուբեն Սինոյան
Անդամներ	Դավիթ Բակլաչյան
	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան

Վարույթ՝	ՊԼ-008
Խախտում՝	«Վեստ Արմենիա» առաջին թիմի մարզիչ Կարեն Ավոյանի կողմից (1455) կողմից հայհոյանքներ հնչեցնելը, խաղի պատվիրակի նկատմամբ հարվածելու փորձ կատարելը։ (Հավելված 1 Բ, 17-րդ կետ)
Առաջնություն՝	IDBank ՊԼ 2023-2024
Խաղ՝	«Վեստ Արմենիա» - «Ալաշկերտ» (1:4), 07.08.2023թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Որակազրկել «Վեստ Արմենիա» առաջին թիմի մարզիչ Կարեն Ավոյանին (1455) 5 խաղով: Որակազրկումը տարածվում է 07.08.2023թ.-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(երը)ը (այդպիսիք լինելու դեպքում):
2. Որոշման 1-ին կետով սահմանված որակազրկման մի մասը՝ 3 խաղ, կիրառել պայմանական 3 (երեք) ամիս ժամկետով:
3. Տուգանել «Վեստ Արմենիա ՖԱ» ՀԿ-ին նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- Եթե Ֆուտբոլային սուբյեկտի կողմից պատասխանատվության միջոցի պայմանական կիրառման ընթացքում թույլ է տրվում համանման կարգապահական խախտում, ապա ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցը կիրառվում է: Միևնույն ժամանակ այդ կարգապահական միջոցը զումարվում է նոր կատարված կարգապահական խախտման հետևանքով կիրառվող միջոցին:
- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված

համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:

- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: